



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք

14/04/2023

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Հրաչիկ Մանուչարյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Զանոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր՝ ր

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1. Վայք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի թվով 4-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Վայք համայնքի Վայք քաղաքի Շինարարների փողոց 1-ին նրբանցք 3 հասցեում գտնվող 0.25162 հա մակերեսով հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
3. Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող 0.015 հա մակերեսով համայնքային սեփականության հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
4. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականության

հողամասերը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գներն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:

5.Վայք համայնքի Ազատեկ բնակավայրում գտնվող 4.00406 հա մակերեսով պետական սեփականության հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:

6.Վայք համայնքի տարածքում գտնվող, համայնքային սեփականության հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:

7.Համայնքային սեփականություն համարվող Ազատեկ բնակավայրում գտնվող չօգտագործվող ոռոգման խողովակաշարը ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Խ.Սահակյան/:

8. Վայք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ին ընդունված թիվ 16-Ա և 17-Ա որոշումներում փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

9.Պատերազմի հետևանքով զոհվածների ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:

10. Վայք համայնքի վարչական տարածքի Զառիթափ բնակավայրում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0,71225 հա արոտավայրը վարձակալության տրամադրելու մասին:

11.Վայք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐՔԱՆՑՔ 3 ՀԱՍՅԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 0.25162 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1. Վայք համայնքի Վայք քաղաքի Շինարարների փողոց 1-ին նրբանցք 3 հասցեում գտնվող, 0.25162 հա մակերեսով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,015 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ
ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ և 76-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0,015 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, կադաստրային ծածկագիրը՝ 10-003-0026-0033) մրցույթային եղանակով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 6000 (վեց հազար) դրամ, ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի, նպատակը՝ սպասարկման սրահ կառուցելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ,
ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286

որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ

ա/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 5-րդ նրբանցքի 2/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն (վկայական՝ 04042023-10-0016) հանդիսացող 10-003-0022-0229 կադաստրային ծածկագրով հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,05 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 938 850(ինը հարյուր երեսունութ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

բ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց 104/1 հասցեում գտնվող 10-003-0026-0032 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 15032023-10-0006) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00242 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 45 440 (քառասունհինգ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

գ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. փողոց 15/18 հասցեում գտնվող 10-003-0010-0063 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 22032023-10-0007) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,0185 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 347 400 (երեք հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

դ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ս.Շահումյան փողոց 1/11 հասցեում գտնվող 10-003-0008-0132 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 22032023-10-0006) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,01088 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 204 300 (երկու հարյուր չորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

ե/ Վայք համայնքի Վայք քաղաքի Ազատության փողոց 1/5 հասցեում գտնվող 10-003-0003-0117 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 01082022-10-0020) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,04 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 751 100 (յոթ հարյուր հիսունմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ:

զ/ Վայք համայնքի Վայք քաղաքի Վ.Համբարձումյան փողոց 6/10 հասցեում գտնվող 10-003-0004-0388 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող

(վկայական՝ 07042023-10-0020) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, մակերեսը՝ 0,00455 հա) հասարակական կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 85 450 (ութսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

է/ Վայք համայնքի Արտավան բնակավայրի 5-րդ փողոց 3/5 հասցեում գտնվող 10-011-0003-0037 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 22032023-10-0013) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,10269 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 223 700 (երկու հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

ը/ Վայք համայնքի Սարավան բնակավայրի Սարալանջ թաղամաս 8 հասցեում գտնվող 10-039-0103-0014 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող (վկայական՝ 01122022-10-0025) հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,07209 հա) բնակելի կառուցապատման գործունեության նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 157 000 (մեկ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 4,00406 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին և 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 2-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.03.2023 թվականի թիվ 01/15/2029-2023 դրական եզրակացությունը.

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 4,00406 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-005-0704-0013) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 52 500 (հիսուներկու հազար հինգհարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 5 (հինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնություն տալ.

ա/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Փոռ բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.15376 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-043-0103-0003) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

բ/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Հերիեր բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.83782 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-028-0174-0016) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության

համար, տարեկան վարձավճարի չափը՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

գ/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.27437 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0121-0192) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

դ/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.815 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0121-0194) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 2500 (երկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

ե/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.3055 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0121-0193) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 1000 (մեկ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

զ/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.36532 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0105-0099) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 1000 (մեկ հազար) դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

է/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.07864 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0115-0120) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության

համար, տարեկան վարձավճարի չափը՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

ը/Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.55844 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0105-0098) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

թ/ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Արին բնակավայրում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ 0.63416 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ այլ հողատեսք, կադաստրային ծածկագիրը՝ 10-009-0105-0097) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի չափը՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՌՈԳՄԱՆ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԽԱԶԱՏՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ազատեկ բնակավայրի վարչական ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն.

1) Վայք համայնքի Ազատեկ բնակավայրում գտնվող չօգտագործվող ոռոգման ազբո 70գծմ երկարությամբ, 300մմ տրամագծով խողովակաշարը ապամոնտաժելու համար:

2) Ապամոնտաժված խողովակները 70գծմ-ը օգտագործել նույն բնակավայրում գործող ոռոգման ցանցի բարեկարգման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 16-Ա ԵՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՒՄ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Վայք համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ին ընդունված թիվ 16-Ա և 17-Ա որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Վայք համայնքի ավագանու թիվ 16-Ա որոշման բովանդակության մեջ փակագծերում գրված «հողատեսքը՝ բնակելի կառուցապատում» բառերը փոխարինել «գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում» բառերով:

1.2 Վայք համայնքի ավագանու թիվ 17-Ա որոշման հղման մեջ ավելացնել «և ՀՀ Կառավարության 17 հունիսի 2021 թվականի թիվ 987-Ն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի համաձայն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեից 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական օգնություն տրամադրել 2023 թվականի ապրիլի 11-ին աղբբեջանական ազրեսիայի հետևանքով զոհված Վայք համայնքի բնակիչ Հենրիկ Վաչագանի Քոչարյանի ընտանիքին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ 0,71225 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ
ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման» մասին թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 2-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով.

1. Տալ համաձայնություն Վայք համայնքի վարչական տարածքի Զառիթափ բնակավայրում գտնվող պետական սեփականություն հանդիսացող 0,71225 հա արտավայրը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Հանձնարարել աշխատակազմին՝ ղեկավարվել ՀՀ կառավարության վերոնշված որոշմամբ և պատրաստել հողաշինական գործ՝ ՀՀ Վայոց Ձորի մարզպետին ներկայացնելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ
ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՆՈՒՇ ԴԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի մայիսի 19-ին, ժամը՝ 15:30-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՄԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

(Handwritten signatures in blue ink corresponding to the names above)

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



Նիստին արձանագրեց՝

(Handwritten signature in blue ink)

